Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lucy
569

2009

A 734

A 734

ԲԷԲԵՐ ԲԻՋՈՒ ՀԱՆԱՓԸ

ԲԷԹԵՐ ԲԻՋՈՒ ՀԱՆԱՔԸ

Լաչ
569
28 JUN 2005
Ա 737

ՕՊԵՐԵՏՏԱ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ՀԵՂ. ԵԱԿՈԲՍՕՆԻ

40887
1880

ԹԱՐԳՄ. Ն. ԼԱԼԱՅԵԱՆՑԻ

ԼՈՌԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ԱՇԽԱՐՀ. ԳՐԱԳԱՐԱՆ.
Ա.ՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆՔ

902

ԹԻՖԼԻՍ

ՀԱՄԲ. ԻՆՃԻՃԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՕՆՐԱՆ.

1879

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 567
569 - 2009

Дозволено Цензурою
Тифлисъ 4 Декабря 1878 года.

ԲԼԻՔԵՐ ԲԻՋՈՒ ՀԱՆԱՔԸ

ՕՊԵՐԵՏՏԱ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԵՐ։

ԿՈՆՐԱԴ ՇՎԱՐՑ, *ոսկերիչ։*
ՄԱՏԻԼԴԱ, *նորա կինը* } *նորապսակներ։*
ԳՈՐԿԷՆ

Անցքը պատահում է մի մեծ գերմանական քաղաքում։

Տեսարանը ներկայանում է հասարակ կարասիքով սարքած սենեակ։ Բեմի առաջին մասում աջ կողմում գտնվում է ոսկերիչի սեղան իւր բոլոր պատկանելիքով։ Աջ կողմում գտնվում է նոյնպէս մի լուսամուտ։ Ձախկողմում գտնվում է մի սեղան, որի վերայ դրած են ծաղիկներով պոյտեր, պահարաններ, աթոռներ և այլն։ Բեմի խորքում և ձախ կողմը կան դռներ։ Բոլորն էլ փոքր ինչ զարդարած են ծաղիկներով։

Վարագոյրը բարձրանալիս բեմը դատարկ է, երաժիշտներն ածում են։

Մտնում են Շվարցն ու Մատիլդան կուռ կռան դցած։ Առաջինը գրակով է, իսկ երկրորդը հարսանիքի շորով։

ՏԵՍԻԼԱ.

ՄԱՏԻԼԴԱ և ՇՎԱՐՑ։

ՇՎԱՐՑ

Վերջապէս . . . վերջապէս, իմ սիրուն Մատիլդա, մենք մենակ ենք և մեր տանը։ (Երաժշտութիւնը լռում է։)

ՄԱՏԻԼԴԱ, հանելով իր հարսանիքի զարդերը։

Այո՛, տանն ենք. բայց ես չեմ հասկանում, թէ ինչ հարկաւոր էր այսպէս շտապով տուն դալ, —տունը հօ մեզանից չէ փախչում։

ՇՎԱՐՑ

Այժմ տատնումէկ և կէսն է, հոդիս, ուրեմն ուրիշ ժամ է անց կացել մեր պսակից յետոյ։

ՄԱՏԻԼԴԱ

Ի՛նչ լաւ էր այնտեղ։ Պէտք է խոստովանել, որ իմ բիձէն լաւ խնճոյք էր սարքել մեր հարսնիքի համար,—ես շատ ուրախ կը լինէի մի քիչ էլ պար դալ։

ՇՎԱՐՑ

Բայց... ես շատ, շատ բան ունիմ քեզ հետ խօսելու։

ՄԱՏԻԼԴԱ

Այդ ինչ բան է... միթէ այնպէս շտապով բան է, որ չէ կարելի մինչև էգուց յետ գցել—պսակիս օրը էլ չուտով չեմ տեսնիլ։

ՇՎԱՐՑ, ծիծաղելով։

Ես կարծում եմ... Գիտես, իմ աննման Մատիլդա, ես վաղուց ուզում էի...

ՄԱՏԻԼԴԱ

Դէհ, ի՞նչ էիր ուզում։

ՇՎԱՐՑ

Ուզում էի քեզ ասել...

ՄԱՏԻԼԴԱ

Բայց ինչ էիր ուզում ասել—ուզում էի, ու-

զում էի— էլ դէնը ոչինչ չկայ։

ՇՎԱՐՑ

Ուզում էի քեզ ասել, որ ես քեզ խելագարի պէս եմ սիրում։

ՄԱՏԻԼԴԱ

Տէր Աստուած—կարծես թէ ես այդ չը գիտէի... այ նոր բան ասեց—միթէ ամէն դորա համար չտապել։ Մենք մէկ մէկու այն ժամանակից ենք սիրում երբ քեզ, տատնուհինդ տարեկան երեխայիդ աչկերտ տուին բիձուս մօտ։ Այսօրուայ պէս միտս է. քեզ որ բերին, դու մաքուր ու խստակ հագնուած էիր, ամենևին նման չէիր մեր միւս բանուորներին։ Ողորմած հոգի մայրդ, միտս է, ասաց բիձուս. սովորցրէք սորան լաւ ոսկերչութիւն,—և իսկոյն բիձէս քեզ նստացրեց ու դործ տուեց ձեռդ —և դու այնպէս երկչոտ ու ամօթխած մտիկ էիր անում չորս կողմդ... Օ՛ այդ բոլորը շատ լաւ միտս է։

ՇՎԱՐՑ

Բայց կէս տարուց յետոյ ես արդէն կարողանում էի լաւ բանել... իսկ յետոյ, Մատիլդա, միտդ է, ինչպէս մենք երկար մտիկ էինք անում մէկ մէկու, առանց մէկ խօսք ասելու... և ի՛նչպէս մենք առաջին անդամ մենակ պատահեցանք պարտիզումը...

ՄԱՏԻԼԴԱ

Եւ երկուսս էլ ամաչեցանք...

ՇՎԱՐՑ

Բայց ինչպէս մի անգամ ես քեզ բռնեցի խոհանոցում, երբ երկու ձեռքդ էլ պարապ չէին, և քեզ համբուրեցի։

ՄԱՏԻԼԴԱ

Հա, անպիտան . . . ինչպէս վախեցրիր ինձ։

ՇՎԱՐՑ

Բայց յետոյ դու էլ չէիր վախենում իմ համբոյրներից։

ՄԱՏԻԼԴԱ

Հա, բայց դու չուտով հեռացար մեղանից։

ՇՎԱՐՑ

Բանակներս տարեկան հասակումս ես արդէն զվխիս տէրն էի։ Ես զգուեցայ միշտ աշակերտ մնալուց և ուզեցայ իմ սեփական արհեստանոցն ունենալ։ Պատճառը, ի հարկէ, դու հասկանում ես, Մատիլդա, որ դործերս կարգի դնելուց յետոյ . . .

ՄԱՏԻԼԴԱ

Կրկին գայիր բիձուս մօտ . . .

ՇՎԱՐՑ

Բէ՛քեր բիձու մօտ, որ աշխարհիս ամենալաւ մարդը կը լինէր, եթէ այնպէս ժլատ . . .

ՄԱՏԻԼԴԱ

Զը համարձակուես նորան հայհոյել, նա իմ երկրորդ հայրն է։

ՇՎԱՐՑ

Գիտեմ, գիտեմ, բայց այնու ամենայնիւ նա մի ժլատ ծեր է,— այդ յատկութիւնը նորանից չէ կարելի խլել . . . «Ուզում ես Մատիլդայի վերայ պը-

սակուել, ասաց նա,— բայց գիտես, որ նա ոչինչ չունի։—«Սխալվում էք, բիձա, պատասխանեցի ես, —նա ունի գեղեցկութիւն ու ջահիլութիւն, խելք և ուրախ սիրտ, և այդքանն ինձ բաւական է։» —«Բայց դու ինքդ ինչ ունես։»—«Ես ունիմ երկու աշխատող ձեռք, առողջութիւն և աշխատանքի սէր։» —Ծերը ժպտաց իր ահագին, չմկած բերանով ու ասաց. «Ապրիս . . . եթէ Մատիլդան ուզում է կինդ լինել,—առ . . .» Այն ժամանակ ես եկայ քեզ մօտ, իմ ծաղիկ . . .

ՄԱՏԻԼԴԱ

Ինչպէս մէկ սիրուն ոսկէ ճանճիկ։

ՇՎԱՐՑ

Այո՛ ինչպէս մի ճանճիկ, որ թռչում է վարդի մօտ . . . և ասացի . . .

Բարի առաւօտ, իմ անգին ծաղիկ։

ՄԱՏԻԼԴԱ

Բարի առաւօտ քեզ, ոսկէ ճանճիկ։

ՇՎԱՐՑ

. . . Իմ քնքոյշ վարդիկ, չուտով ասա ինձ,
Ուզո՞ւմ ես լինել իմ ընկերակից։

ՄԱՏԻԼԴԱ

Եթէ ուզենամ ընկերդ լինել,
Ո՞ւր ես մոռաղիր ինձ հետդ տանել։

ՇՎԱՐՑ

Հով անտառումը, մատաղ ծառի տակ
Ես կը շինեմ տամ մի փոքրիկ տնակ . .
Այդ տնակումը մենք հարմնիք կ՚անենք
Եւ մեղուներին մեղ հիւր կը կանչենք։

Ներամը մնտաքս կըհիւսէ մեզ համար,
Իսկ ճռիկները կ'երգեն անդադար։

ՄԱՏԻԼԴԱ

Աղմուկ չեմ սիրում ես, բարի ճանճիկ,
Խաղաղ անցկենայ թող մեր հարսանիք։

ՇԿԱՐՑ

Թէ չէ դուր գալիս քեզի աղմուկը,
Թող խաղաղ անցնի մեր հարսանիքը։

ՄԱՏԻԼԴԱ

Թող օրօր ասեն ինձ թռչունները,
Մայիսի ծաղկունքն ու զամբախները,
Եւ թող սոխակի հրաշալի երգը
Երկարացնէ մեր քաղցր երազը։

Ուրեմն, այժմ դու երջանիկ ես, իմ խենդիկ։

ՇԿԱՐՑ

Այնպէս երջանիկ եմ, որ մինչև անգամ սարսափում եմ։

ՄԱՏԻԼԴԱ

Սարսափում ես,—ինչից ես վախենում . . .

ՇԿԱՐՑ

Այնպէս, մի անմիտ զգացմունք կայ սրտումս . . . Գիտես, երբ մարդուս բանը լաւ է գնում և օրը լաւ է անցկենում, մարդ ակամայ մտածում է, թէ ինչով ես դու ուրիշներից աւելի որ առանց վշտի ապրիս . . .

ՄԱՏԻԼԴԱ

Ա՛յ դու անպիտան մնոտիապաշտ . . . Ի՞նչ վիշտ կարող ենք մենք ունենալ . . . Մենք առողջ ենք

և ջահել. փող չ'ունինք,—ուրեմն կորցնելու բան էլ չ'ունինք . . . .

ՇԿԱՐՑ

Է՛հ, ով է մտածում փողի վրայ, փողը կարելի է կրկին աշխատել, ես աւելի մեծ կորստից եմ վախենում . . . ես վախենում եմ, որ դու ինձ կ'ուրանաս։

ՄԱՏԻԼԴԱ

Այդպէս յիմար բան քեզանից չէի սպասում։

ՇԿԱՐՑ

Իրաւ է, յիմար բան է իմ ասածս, բայց դու, այնպէս սիրուն, դուրեկան, ուրախ ես, որ քեզ տեսնողը անպատճառ զմայլում է . . . ուրիշ տղամարդիկը քեզ այդ կ'ասեն, և դու կը հաւատաս նոցա խօսքին։

ՄԱՏԻԼԴԱ

Ի՞նչ հարկաւոր է ինձ նոցա խօսքին հաւատալ,—ես առանց նոցա էլ գիտեմ այդ։

ՇԿԱՐՑ

Գիտես, հոգիս, ես քեզ չէի ուզում ասել,—բայց, թող սրտումս ոչինչ չը մնայ, ասա խնդրեմ, սիրելիս, ով էր այն . . . այն օֆիցերը . . . ինչպէս էր նորա . . .

ՄԱՏԻԼԴԱ

Ա՛, այն ֆրանտը, որ ամեն ամիս բերում էր բիձուս մօտ իր ժամացոյցի չղթան դրստելու,—այ գառար ում վրայ խօսելու . . . Ես ի՞նչ մեղ ունիմ, որ նա իրան համարում է ամենքին յաղթող և այն-

քան քաշ եկաւ մեր խանութը, մինչև որ ես Նորա ոտը կտրեցի այնտեղից։

ՇՎԱՐՑ

Օ՛հ, այդ օֆիցերները . . . այդ օֆիցերները այնպէս հաստատակամ մարդիկ են. իսկ դուք, կանայք, այնպէս թոյլ էք չողոքորթողների առաջ։

ՄԱՏԻԼԴԱ

Ուզում ես ինձ բարկացնել հարսանիքիս օրը . . Լաւն այն կըլինի քեզ վրայ մտածես ու քո հաստ կարողինիդ վրայ . . .

ՇՎԱՐՑ

Հա, հա, հա, ով գիտէ ասես էլ թէ ես սիրահարուած էի նրա վրայ։

ՄԱՏԻԼԴԱ

Բայց դու կարմրեցար. երբ ես Նորա անունը տուի։

ՇՎԱՐՑ

Ի՞նչ կարմրելու բան ունիմ։

ՄԱՏԻԼԴԱ

Զգիտեմ . . . ինձ ասում էին թէ դու շատ քաղցր էիր խօսում Նորա հետ . . .

ՇՎԱՐՑ

Ես Նորա տանն էի կենում և ակամայ պէտք է քաղցր վարուէի Նորա հետ . . . Դու հօ գիտես, որ բիձուդ մօտ բանողը շատ փող չի վաստակի. ուրեմն հասկանալի բան է, որ ես միշտ պարտ էի տանտիկնոջս . . . եթէ իմ սիրահարական հայեացքներս

ու Նորա քնքուշ սիրտը չլինէին, ես շատ անգամ փողոցումը կը քնէի։

ՄԱՏԻԼԴԱ

Իմ խեղճ Շվարց։

ՇՎԱՐՑ

Խե՛ղճ. չէ, ներողութիւն, այժմ ես հարուստ եմ . . . Այժմ ես թէև փոքրիկ, բայց իմ սեփական խանութն ունիմ, և այնքան աշխատում եմ որ կարիք չունիմ ոչ որի սիրտը գրաւելու, բայց ի իմ սիրուն, անմման Մատիլդայից (Համբուրում է նրան։ Լսում է տաներկու ժամը։ Ինքն իրան։) Գիշերուայ կէսն է։—Անիծած խոստմունքս, ինչպէս ազատուիմ Նորանից։ (Մատիլդային) Դէ՛հ, սիրուն Մատիլդա, բարի գիշեր։

ՄԱՏԻԼԴԱ

Ի՞նչպէս թէ բարի գիշեր . . .

ՇՎԱՐՑ

Մնաս բարեաւ (Համբուրում է նրան), գնա քնիր, ծաղիկս։

ՄԱՏԻԼԴԱ

Դու հեռանո՞ւմ ես ինձանից . . .

ՇՎԱՐՑ

Ինձ . . . ինձ հարկաւոր է . . . ես պէտք է փոքր ինչ նստեմ—ես խոստացել եմ վաղը առաւօտուայ համար մի փոքրիկ գործ . . .

ՄԱՏԻԼԴԱ

Այդ գործը չէ կարելի վաղուան թողնել։

ՇՎԱՐՑ

Ամենևին չէ կարելի։ Ես խոստացել եմ առա-

ուտու

(Թափում է մուրճով)

Թրջիկ, թրջիկ, խփիր աշխատաժով.

Թրջիկ, թրջիկ զարկիր ուժով.

Ո՛վ սիրուն աղաունակ, դու իմն ես, հոգեակ...

(Վեր է կենում ու ձախ կողմի դռնից ականջ է դնում։)

Ձայն չկայ. . . միայն նորա հանգիստ շնչառութիւնն է լսվում. երեւի քնել է. . . Այժմ, կարծեմ, կարելի է. բայց ինչ դժուար է հեռանալը։

(Հագնում է ֆրակը, առնում է գլխակն ու վերարկուն և հանդցնում է լապտերը։)

Մնաս բարեաւ, սիրուն աղաունակս. ցտեսութիւն. . .

(Հեռանում է մրջի դռնով և կողպում է իր ետեւից դուռը։)

ՏԵՍԻԼ Գ։

ՄԱՏԻԼԴԱ, կարճատեւ լռութիւնից յետոյ դուրս է գալիս իր սենեակից։ Նա գիշերազգեստով է—մտնում է կամաց և կանգնում է։

Մութն է, ուրեմն չեմ սխալվում. նա գնացել է. . . նա կարծել է, թէ ես քնել եմ . . . (վառում է ճրագը։) Օ՛, լիմ խոբամանկ ամուսին, ես այնպէս յիմար չեմ ինչպէս որ կարծում ես։ Ո՞ւր էր կարող նա գնալ այս գիշեր ժամանակ . . . և գլխաւորը՝ առանց մի խօսք ասելու ինձ այդ մասին. . . Այդ զզուելի է նրա կողմից. . . ես նորան այստեղ կը սպասեմ. . . թող տեսնէ որ ես սպասել եմ նորան, նա ինքն իւր արարմունքից կ՚ամաչի. . . (Բաց է անում պատուհանը) Ի՜նչ հիանալի գիշեր է, ինչպէս հով ու մեղմ է օդը . . .

Գիշերը սփռում է
Քաղցր քուն ամենքին.
Իսկ լուսինը լոյս տալիս
Մութ երկնակամարին։
Կարծես բարձր երկնքից
Եւ հրաշալի աշխարհից
Մի ձայն է գալիս ինձ.
Մեղմ գիշեր
Քնաբեր. . .
Ե՛կ պարկիր
Ու ննջիր . . .

(Բարկացած) Չ՚եկաւ . . . օհ, տէր Աստուած.. այս արդէն անտանելի է . . .

Բայց ինչ պառկեմ այս սրտով,
Երբ որ քունս չի տանում . . .
Սիրուն ամուսնիս մտքով
Կինը էլ չէ անցնում . . .
Բայց ախ, կրկին թող նա գայ,
Չեմ լինի անխնայ,
Այլ կասեմ քաղցրութեամբ.
Մեղմ գիշեր
Քնաբեր,
Ե՛կ պառկիր
Ու ննջիր։

Անխղճմտանք, անգութ . . . (Մատենում է դրանը։) Տեսէք, մինչև անգամ կողպել է ինձ... այդ աննրելի է . . . (Դուռը ծեծում են). Էս ինչ է, Դուռը ծեծում են . . . Ո՞վ է։

ԳՕՐԿԷՆ, բեմի խորքից։

Կարծեմ, էստեղ է կենում պ.
Շվարցը։

ՄԱՏԻԼԴԱ

Այստեղ է։ Ո՞վ էք դուք։

ԳՕՐԿԷՆ։

Բաց արէք, խնդրեմ։

ՄԱՏԻԼԴԱ, դրան կողմը։

Ո՞վ էք . . . պարոն Շվարցը
տանը չէ . . .

ԳՕՐԿԷՆ

Բաց արէք, մի վախենաք . . . ինչ էք կասկածում—ես նրա հին ծանօթն եմ . . . մի բան եմ բերել նրա համար. դոռ կը մնաք . . .

ՄԱՏԻԼԴԱ, ինքն իրան։

Ի՞նչ կարող է բերել նա այդպէս ուշ մարդուս . . . այդ հետաքրքրական է . . . (Դուռը ծեծում են)։ Բայց ինչպէս բաց անեմ, նա բանալին հետը տարել է. . . (Ցանկարծ մտաբերում է)։ Կա՛յէք, կա՛ցէք, ես էլ հո ունիմ բանալի . . . ըսպասեցէք փոքր ինչ, խակոյն . . .

(Պարում է պահարանում, հանում է բանալին և բաց է անում դուռը։ Մտնում է Գօրկէնը ֆրակով ու գլխարկով։ Նա փոքր ինչ հարբած է։ Նորա շորերը անկարգ են, ձեռքին ունի մի փոքրիկ արկղ։)

ՏԵՍԻԼ Դ.

ՄԱՏԻԼԴԱ, ԳՕՐԿԷՆ։

ԳՕՐԿԷՆ, մանելով։

Բարև ձեզ, աղջիկ պարոն . . . ներեցէք,

որ էնենց . . . մէ քիչ ուշ է . . . (Ծիծաղում է)։

ՄԱՏԻԼԴԱ

Տէր Աստուած, հարբած է . . .

ԳՕՐԿԷՆ

Ներեցէք . . . Մի վախենաք, որ ես էնենց... ձեր կենացը մէ քիչ աւել խմեցի . . . դուք մի կասկածէք . . . ես ձեզ ոչինչ բանով չեմ անպատուի . . . ես միայն մէ բան եմ բերել ձեզ համար։

ՄԱՏԻԼԴԱ

Ի՞նչ բան։

ԳՕՐԿԷՆ

Ա՛յ, էս սնդուկը . . . էդ ձեր մարդու համար է . . . դուք նրան կը տաք (Սնդուկը դնում է սեղանի վրայ։

ՄԱՏԻԼԴԱ

Ի՞նչ կայ այդ արկղի մէջ։

ԳՕՐԿԷՆ

Չէ՞ք իմանում։

ՄԱՏԻԼԴԱ

Ո՞րտեղից կարող եմ ես իմանալ։

ԳՐՕՐԿԷՆ

Ես էլ չեմ իմանում . . . (Ծիծաղում է, յետոյ յանկարծ ծանր խորհրդաւոր կերպարանք է ընդունում էդ գաղտնիք է . . . Սա՛ . . .

ՄԱՏԻԼԴԱ

Գաղտնիք է—ով է դորա ուղարկողը։

ԳՕՐԿԻՆ

Սա՛ . . .

ՄԱՏԻԼԴԱ

Տղամարդ է։

ԳՕՐԿԻՆ

Չէ։

ՄԱՏԻԼԴԱ

Ուրեմն կին է։

ԳՕՐԿԻՆ

Չէ, կին չէ։

ՄԱՏԻԼԴԱ

Ուրեմն ո՞վ է վերջապէս։

ԳՕՐԿԻՆ

Էդ գաղտնիք է . . . Սա՛ . . . (Գնում է դէպի միջին դուռը և կանգնում է) Էդ գաղտնիք է . . . Սա... բարի գիշեր, աղջիկ պարոն, հա՛, հա՛, հա՛. . . (Դռան մէջը։) Սա՛ . . .

(Գնում է։)

ՏԵՍԻԼ Ե։

ՄԱՏԻԼԴԱ մենակ։

Էդ գաղտնիք է, սա՛ . . . գաղտնիք է։ (Շփոթուած։) Ուրեմն, իմ մարդը յիրաւի գաղտնիքներ ունի . . . Օ՛, ես իսկոյն կ՚իմանամ այդ գաղտնիքը . . . Տեսնենք ինչ կայ այդ սնդուկումը . . . (Ուզում է բաց անել։) Կողպած է . . . հրմ, ուզարկողը զգոյշ է եղել, իմացել է, որ մատուակը կարող է իմ ձեռքն ընկնել, թէ և գիշերուայ կէսին են բերել . . . բայց ես անպատճառ պիտի իմանամ ինչ կայ սորա մէջ (Նայում է պատուհանից։) Ա՛ . . . մեր հարևան դարբինը դեռ քնած չէ, փառք Աստուծոյ . . . Իսկոյն կը բերեմ նորան այստեղ. կը խաբեմ մի բանով կ՚ասեմ անպատճառ հարկաւոր է այդ սնդուկը բաց անել։ Օ՛, դուք ինձ չէք խաբի, պարոն . . . ես ձեր բոլոր գաղտնիքները կ՚իմանամ, ինչ հնարքով ուզում է լինի։ Այստեղ ես կարող եմ մարդուս պատահել. աւելի լաւ է խոհեմութիւն գնամ։ (Նա կողպում է միջի դուռը, հանդցնում է հրագը և գնում է ձախ կողմը։)

ՏԵՍԻԼ Զ։

(Մատիլդայի գնալուց յետոյ Իսկոյն լսում է դրան բանալիքով բաց անելը։ Միջին դուռը բացվում է։ Հանդարտ մտնում է Շվարցը և իւր յետեւից կողպում է դուռը։)

ՇՎԱՐՑ (Բարկացած գոչում է աթոռի վերայ վերարկուն ու գլխարկը։)

Էդ անխղճութիւն, անամօթութիւն է մարդու վերայ այդպէս ծիծաղելը . . . Գալիս եմ Բէքեր բիձու մօտ, կարծելով թէ նա մինակ կը լինի և գտնում եմ բոլոր հիւրերին միասին հաւաքուած։ Բոփակը ծիծաղում է, ու ամենքն էլ սկսում են ինձ ջգրայնել, «ինչպէս թողիր կնոջդ, բայց գիտես, որ կապիտան Դիստիլդը ուզում էր նորան փախցնել»—սկսան ծաղր անել . . . ես թքեցի և ուզում էի հեռանալ. բայց այդ միջոցին Բէքեր բիձէն ինձ մի կողմը կանչեց ու ասաց. «դու կատարեցիր տուած խօսքդ. այդ ազնիւ, լաւ բան է. ահա քեզ վարձ դորա համար, և ձեռքս դրեց այս բանալին (Դնում է բանալին սեղանի վերայ։) Կարծես դորա համար արժէր ինձ անհանգիստ անել կեանքիս ամենալաւ օրը, Մատիլդայիս էլ անհանգստութեան մէջ

(1010) 569-32009
40887

դցել . . . յիմար հանաք։ Էհ, վանք Աստուծոյ, բոլորն էլ անց կացաւ . . . Վառում է լոպտերը։ Ես տանն եմ, և անգին Մատիլդայիս երկար սպասել չտուի։ Նա երևի այժմ քաղցր քնում է, առաջին քունը միշտ քաղցր է լինում։ (Հանդարտ դնում է ձախ կողմը դռնովը և իսկոյն յետ է դալիս։ Այս ինչ է նշանակում. նա այստեղ չէ։ Նա գնացել է . . . Ո՞ւր, ինչու . . . Զլինի Բէքեր բիձէն ինձ գիտութեամբ կանչեց, որ նորան միջոց տայ . . . Ոչինչ չեմ հասկանում. բայց այս անպիտան, ցած, զզուելի բան է . . . (Նայում է պատուհանից։ Գալիս է Մատիլդան ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Է։

ՄԱՏԻԼԴԱ և ՇՎԱՐՑ

ՄԱՏԻԼԴԱ, ինքն իրան։

Ա՛, եկել է . . . Բայց ինչ անմիտ ու վավկոտ եմ եղել ես. գնացի մինչև դարպսի դուռը և չհամարձակեցայ դուռը ծեծել . . . մտածեցի. ինչպես երևում նրան այս կէս գիշերին. ինչ կը մտածէ նա ինձ վերայ։ (Բարձր) Եկար, կոնրադ . . .

ՇՎԱՐՑ, շուտ գալով։

Ա՛, Մատիլդա (Զոպելով ուրախութիւնը։ Ահա եկաք վերջապէս. լաւ ժամանակ էք ընտրում ձեր դրօսանքների համար։

ՄԱՏԻԼԴԱ

Ես գնացել էի . . .

ՇՎԱՐՑ, բարկացած։

Ո՞ւր, ո՞ւր էիք կարող գնալ այս կէս գիշերին, ո՞ւր . . .

ՄԱՏԻԼԴԱ

Այդ ի՞նչ անալի ձայնով էք խօսում . . . էն էլ ով է համարձակում խօսել . . . իսկ դուք, ուր էիք չնորհ տարել։

ՇՎԱՐՑ

Ե՞ս։

ՄԱՏԻԼԴԱ

Այո՛, դուք։ Դու. ուզում էիր այստեղ բանել, բայց հենց որ աչքս խփեցի, իսկոյն փախար . . . երևում է քեզ աւելի յարմար է ուրիշի տանը բանել . . . Եւ այդ մեր հարսանիքի օրը . . .

ՇՎԱՐՑ

Խնդրեմ խօսքը կտուրը չդցէք. ամենից առաջ դուք պէտք է ինձ ասէք, թէ ուր էիք։

ՄԱՏԻԼԴԱ

Չէ, դուք ինձ պէտք է հաշիւ տաք . . .

ՇՎԱՐՑ

Պատասխան տուէք ինձ, ասում եմ։

ՄԱՏԻԼԴԱ

Ի՞նչ, կարծեմ դուք ուզում էք ինձ հրամայել։

ՇՎԱՐՑ

Ես կատարեալ իրաւունք ունիմ հրամայելու։

ՄԱՏԻԼԴԱ

Մի՞թէ։ Իրաւունք ունիք. ոնց չէ, զողում եմ

ձեր առաջին . . . Ինչ կայ, դուք իմ տէրն էք. կարելի է կը կամենաք և ծեծել ինձ։

ՇՎԱՐՑ

Ես ձեզ խնդրում եմ թողնէք այդ յիմար եղանակը։ Ես ձեզ հարցնում եմ — և դուք, իբրև կին, պէտք է ինձ պատասխանէք։

ՄԱՏԻԼԴԱ

Դուք, իբրև տղամարդ, պէտք է ինձ առաջ ասէք . . .

ՇՎԱՐՑ

Չէ, դուք պէտք է ասէք . . . լսում էք. դուք։

ՄԱՏԻԼԴԱ

Օ՛, մարդու համբերութիւնը հատնում է։

ՇՎԱՐՑ

Էդ արդէն չափից անց է . . .

Թէ և շատ բարեսիրտ եմ ես.
Բայց թէ այդպէս միշտ կը վիճես
Կծու խօսքով,
Անարգանքով,
Սիրտս խպառ
Կը դառնայ քար։

ՄԱՏԻԼԴԱ

Ես միշտ պատրաստ եմ հնազանդվել.
Բայց ով կ'ուզէ ինձ չարչարել,
Ինչպէս որ դու,
Նորան ես չեմ խնայելու։

ՇՎԱՐՑ

Ահա իմ քնքուշ վարդիկը։

ՄԱՏԻԼԴԱ

Դու կոտրեցիր քո խոստումները։

ՇՎԱՐՑ

Դու հեզ էիր գառնուկի պէս։

ՄԱՏԻԼԴԱ

Երբ դեռ հաւատում էի քեզ։

ՇՎԱՐՑ

Առաջ քեզ բոլոր սրտից
Էի սիրում։

ՄԱՏԻԼԴԱ

Իսկ երբ որ կին առար ինձ,
Սիրելով ես տանջում։

ՇՎԱՐՑ

Թէպէտ և ես պսակուեցայ
Ու բերի քեզ իմ տուն.
Բայց դորանով չը կամեցայ
Լինել քո ձեռնածուն։

ՄԱՏԻԼԴԱ

Ես էլ թէպէտ թոյլ էակ եմ.
Բայց դարձեալ սարուկիդ չեմ,
Եւ իմ դլխին ոչ մի բանում
Քեզ տէր չեմ ճանաչում։

ՄԻԱՍԻՆ

Այս կանայքը, ով Աստուած,
Տղամարդիկը, տղամարդիկը,
Ով որ նրանց հաւատայ,
Նորա օրն ու կեանքը
Ցաւիտեան կը սենայ։

ՇՎԱՐՑ

Ես պահանջում եմ չը բղաւէք.
Պատճառ՝ այս տան տէրը ես եմ.
Եթէ իսկոյն չը դադարէք,
Ես ամէն բան կը փչրտեմ։

ՄԱՏԻԼԴԱ

Մի վախենաք, փախչողը չեմ,
Կ՚ուզէք, ես ինքս էլ ձեզ կ՚օգնեմ։

ՇՎԱՐՑ

Այդպէս, կեանքս խաւարեցրու։

ՄԱՏԻԼԴԱ

Դու էլ իմ օրս սևացրու։

ՄԻԱՍԻՆ պոյտերը կոտրտելով։

Ահա քեզ,
Ահա քեզ։

ՇՎԱՐՑ

Ես ամէն բան կը ջարդոտեմ։

ՄԱՏԻԼԴԱ

Կատաղութիւնից դողում եմ։

ՇՎԱՐՑ

Դու չարութիւնդդ չափ չունի։

ՄԱՏԻԼԴԱ

Քոնն է տան անգամ աւելի։

ՄԻԱՍԻՆ

Այս կանայքը, ով Աստուած։
Տղամարդիկը, տղամարդիկը, և այլն։

ՇՎԱՐՑ

Լարող էի ես այդ սպասել քեզանից։

ՄԱՏԻԼԴԱ, լալով։

Այո՛ հայհոյիր, խայտառակիր ինձ քո սևփա-

կան յանցանքդ ծածկելու համար։

ՇՎԱՐՑ

Ի՞նչ ես ասում, ինչպէս կարող եմ ես քեզ հայհոյել, ես սիրուցս չարժուած եմ պսակուել քեզ վերայ . . . թէպէտ մի քիչ չտապեցայ . . .

ՄԱՏԻԼԴԱ

Շտապեցար։ Եթէ ցաւում ես այդ մասին, կարելի է և բաժանուել։ (Այլս է)։

ՇՎԱՐՑ

Այդ ձեզանից է կախուած . . . Եթէ ձեզ դժուար է ինձ հետ ապրելը . . . (Աչքերը սրբում է թաշկինակով)

ՄԱՏԻԼԴԱ լալով։

Ի՞նչ կայ, դուրս արա ինձ . . . ես փողոցումը չեմ մնանի . . . կրկին կ՚երթամ Բէքեր բիձու մօտ . . . նա ինձ չի թողնի։

ՇՎԱՐՑ

Ես քեզ ամենևին չեմ դուրս անում, բայց եթէ դու ինքդ ուզում ես ինձանից հեռանալ, և մեղքդ չի գալիս ինձ դէն գցել . . .

ՄԱՏԻԼԴԱ, լալով։

Դուրս արա, դուրս արա, փայտ, երկաթ վերառ . . . ես խանարհութեամբ կը տանեմ բոլորը մինչև անգամ եթէ դու ինձ ծեծես . . . որովհետև ես քեզ սիրում էի, թէպէտև դու ինձ խաբում էիր։ (Հեծկլտում է։)

ՇՎԱՐՑ, արտասուելով։

Ես երբէք չեմ խաբել քեզ . . . երբէք . . . երբէք։ (Թափում է բռնով սեղանին։

ՄԱՏԻԼԴԱ

Այդպէս տաքանալ . . . այդպէս վիրաւորել ինձ . . . և բոլորը ինչու՞ համար—այս անիծած անդուկի համար . . .

ՇՎԱՐՑ

Ի՞նչ անդուկ։

ՄԱՏԻԼԴԱ

Ա՛յ, այն անիծած անդուկը . . . Երբ դու գնացել էիր, մի հարբած մարդ բերեց այդ . . . (Հեգկտում է)։ Երևի մէկը քեզ հարսանիքի ընծայ է ուղարկել։

ՇՎԱՐՑ

Բայց ո՞վ կարող էր ուղարկել . . .

ՄԱՏԻԼԴԱ

Ես ի՞նչ գիտեմ,—այն հարբած մարդը, որ բերեց այդ, այնպէս խորհրդաւոր կերպով էր խօսում, որ ես կարծեցի թէ այդ ընծայ է մի որ և իցէ . . . Էհ, մի խօսքով իմ նախանձը շարժուեցաւ իմ մէջ . . . այդ միջոցին տեսայ, որ դարբնի տանը ճրագը վառ է, գնացի . . .

ՇՎԱՐՑ

Որ նորան բերես ու բաց անես արկղը։

ՄԱՏԻԼԴԱ

Ի հարկէ, այդ լաւ չէ. ես չպէտք է ձեռք տայի ուրիշի բանին . . . բայց ես կարծում էի, թէ մարդու ու կնոջ մէջ ոչինչ գաղտնիք չպէտք է լինի . . . Բացի դորանից, ես այնպէս ցանկանում էի համոզուել . . .

ՇՎԱՐՑ, գրկելով նրան։

Սիրելի Մատիլդա, ինչ յիմարն եմ եղել . . . և ինչպէս կարողացայ մտածել . . . այ ախմախ, ախմախ . . . և այս բոլորը Բէքերի բանն է ...Ներիր ինձ, Մատիլդա,—ներիր, ես քեզ վերայ էլ երբէք չեմ կասկածի . . .

ՄԱՏԻԼԴԱ

Անդութ, անպիտան, դէհ, բաց արա չուտով արկղը, ցոյց տուր ինձ գաղտնիքներդ։

ՇՎԱՐՑ, զննելով անդուկն։

Ի՞նչպէս բաց անեմ։

ՄԱՏԻԼԴԱ

Ինչպէս կամենաս։ Բանալի չբերեցին հետը։

ՇՎԱՐՑ

Բանալի, բանալի (Զարմացմամբ մոտենալով)։ Հասկանում եմ, . . . Ուռնում է սեղանի վերայից իր հետ բերած բանալին։ Ուրեմն այս է եղել այս բանալիքի նշանակութիւնը։ Գիտես ով է ուղարկել մեզ այս անդուկը։

ՄԱՏԻԼԴԱ

Ո՞վ։

ՇՎԱՐՑ

Բէքեր բիձէն։ Ես այս բոպէիս Նորա մօտից եմ գալիս։ Նա ինձանից աղնիւ խօսք էր առել, որ այս գիշեր գնայի Նորա մօտ,—և ահա նա ինձ տուեց այս բանալին . . . տես, հէնց այն է, բոլորովին գալիս է կողպէքին։ (Բաց է անում)։ Տէր Աստուած, այստեղ փող է . . . Բոլորը ոսկով լիքը

պարկեր են ու տոկոսաբեր թղթեր . . . ինչն է մեր ծերը . . .

ՄԱՏԻԼԴԱ

Ա՛, ահա և մի նամակ կարդում է։ «Սիրելի որդիքս»։

ՇԿԱՐՑ

Տիանենք, տեսնենք։

ՄԱՏԻԼԴԱ կարդում է։

Ամենքն էլ ինձ ժլատ ծեր են համարում, բայց ինձ համար այդ միևնույն է։ Ինձ համար թանկ է միայն ձեր յարգանքը, այս պատճառով դուք պէտք է իմանաք իմ կեանքի պատմութիւնը։

ՇԿԱՐՑ

Ի՞նչ է։

ՄԱՏԻԼԴԱ, կարդում է։

Աշխարհիս երեսին միայն մի էակ կար, որին ես սրտով սիրում էի,—այդ իմ քոյրն էր, Մատիլդային մայրը։ Տասնուվեց տարի առաջ մեռաւ այրի և յետին աղքատութեան մէջ։ Իմ ձեռքիս մնաց նորա աղջիկը։ . . . (Դադարելով) Չեմ կարող կարդալ . . .

ՇԿԱՐՑ, առնելով նամակը։

Որովհետև ես բաց ի այդ աղջկանից ոչ ոք չունէի աշխարհիս երեսին, երդուեցի մինչ այնքան անտեսութիւն անեմ ու փող հաւաքեմ, մինչև որ սիրելի Մատիլդային բաղդը ապահովեմ։ Ես էդ ոչ որի չէի յայտնում, որ Մատիլդայի մարդը նորան

ուզէ և ոչ թէ փողը։ Դու ազնիւ տղայ ես, կոնրադ, և կարող ես ազնիւ կերպով օգուտ քաղել նորա օժիտից։ Բաղդաւոր եղէք ու մէկ մէկու սիրեցէք։ Բէքեր բիձա։

ՄԱՏԻԼԴԱ, համբուրելով նամակը։

Իմ անգին բիձա։

ՇԿԱՐՑ

Տանուտէրնդ հաղար։ Ինչպէս քիչ ենք ճանաչելիս եղել նորան . . . Լաւ հանաք արեց նա մեզ հետ։

ՄԱՏԻԼԴԱ

Գնանք իսկոյն շնորհակալութիւն անենք նորան։

ՇԿԱՐՑ

Գնանք . . . Բայց չէ՞, նա այժմ քնած կլ՚ լինի, մեզ էլ ժամանակ է քնելու։ Թողնենք այդ էգուցուան։

ՄԱՏԻԼԴԱ

Դու ինձ վերայ էլ բարկացած չես իմ նախատինքներիս համար։

ՇԿԱՐՑ

Դու էլ ներում ես ինձ։

ՄԱՏԻԼԴԱ

Իմ խօսքերս մոռացիր,
Ներիր քո կնոջը։

ՇԿԱՐՑ

Օ՛, ես երբէք չեմ յիշի
Այս օրուայ մեր վէճը։

ՄԱՏԻԼԴԱ

Ուշիատելով եռանդով,
Ես ամէն գիշեր սիրով
Ու քաղցրութեամբ կ'ասեմ.

Մեղմ գիշեր,
Քնաբեր։
Ե՛կ պարկէր,
Ու ննջէր։

Վ Ե Ր Ջ։

ԼՈՒՍԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ԱԹԱԿԻՏ. ԳՐԱԳԱՐԱՆ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆՑ

«Ազգային գրադարան»
NL0153175